Յաղագս չուելոյ Թովմաճանի ի Կոստանդնուպոլսոյ Պօղոս որդւովն ի յԵգիպտոս և անտի ընդ կարմիր ծով գնալն ի Ճիտտէ և անտի անցանելն ի Աֆրիկէ և գնալն ի Հապէշաստան ի քաղաքն Կեօնտէր։

1761 – Այլ արդ՝ յորժամ ծանեան բարեկամք թէ Թովմաճանն գնալոց է յԵգիպտոս, բազում անձինք բերին զապրանս իբր տասն հազար ղուրուշի և աղաչելով տային թէ այսոքիկ ապրանք վաճառք Եգիպտոսի են. իսկ Թովմաճանն պչրազլաց լինելով այսինքն նազանմիշ ըլլալով էառ և ետ իւրաքանչիւրոցն զընկալման գիրս. և վասն այսորիկ ամենայն ոք բաղձայր տալ նմա զապրանս. վասն զի ի յաբեւելս այսպէս ապրանս տուողաց ոչ տան զգիր, զի չէ օրէն։

Արդ գնացեալ Թովմաճանն եգիտ գնաւ մի որ ի Քանտիա կղզին գնալոց էր և անտի ի յԵգիպտոս. և եմուտ Թովմաճան ընդ Պօղոս որդւոյ իւրոյ անդր ընդ իւր ունելով զիւր զապրանսն, և զօտարի զապրանսն ծածկելով ի թաքստի ապահով տեղւոջ։ Եւ մահտեսի Ռաստի որդի Ակոբ աղան որ էր փեսայ քեռն Թովմաճանի, ծանեաւ թէ ի Քանտիա գնալոց է նաւն, ասէ ցԹովմաճանն. Տաց քեզ գիր մի մեր Սորասալան Ահմէտ Բաշային որ է ի Քանտիա և ունիմ ի վերայ նորա զառնելիս 80 քսակ և զորքանս շահեսցես յիմ դրամոց կէսն քեզ լիցի։ Եւ ետ զգիրն հանդերձ յանձնարարութեամբ։

1762 – Եւ առեալ Թովմաճանին զայն գիրն ելի ի Կոստանդնուպոլսոյ 1762 Սեպտ. 28ին և Հոկտ. 25ին հասաւ ի Քանտիայի Սուտան մերձ ի Ճանէա։ Եւ այս Սուտայի նաւահանգիստն տասն մղոնաւ երկայն և խոր է, և ի բերան նաւահանգստին ի վերայ ապառաժ քարի գոյ ամուր բերդ մի, և ի Ճանէա քաղաքն եւս շրջապատն ամուր Ս. Մարկոսի նշանաւ բերդ է որ ի Վենետիկցւոց շինեալ է։ Եւ աստ ի Սուտա և ի Ճանէա նստան աւուրս վեց և ապա ելեալ անտի 20 մղոնիւք հեռի հասին ի Քանտիա։ Եւ Թովմաճանն զառեալ գիրն ի Ճակոբ աղա Ըռաստեանէն տարեալ ետ Սորասալան Ահմէտ բաշային, և նա սիրով ընկալաւ զնա, և եղ ընդ վաճառապետին իւրոյ գաղատացի Բըլճըօղլու հոճայ Ցովհաննէսին. և եւս ետ թայինթայանաղ այսինքն ապրուստ լիովին։ Սակայն վասն առնելեացն Ակոբ աղային այժմ ոչ է ժամանակ գալուստն մեր դրամոց, և յետ երից ամսոց զան և ես յայնժամ առաքեցից առ նա ասելով՝ ոչ ինչ ետ ի դրամոց նորա. և դու, ասէ եթէ ունիս զընտիր ինչ յակնեղինաց բեր տեսցուք ասաց. և Թովմաճանն տարաւ ընդ իւր եղեալ զակնեղէնսն և զմի մատանի տամլա թեղին եագութ կամեցաւ գնել բաշան, և գնեաց 550 դահեկանաւ և իսկոյն ետ զդրամն։ Դոյր եւս մին բանած մէրջան թրոյ դապզէ որոյ գոյր եւս մին բանած մէրջան թրոյ դապզէ որոյ պալջախն սոմ սրվամա պուլանդի էլմասով զարդարեալ էր. եհարց զգինն. իրրեւ լուաւ թէ 6000 դահեկանի է՝ հրաժարեցաւ ասելով թէ դու երթալու ես, և ես այժմ ոչ ունիմ դրամս. և յոյժ ընտանեցաւ ընդ Թովմաճանին։ Եւ եւս ետ նմա յանձնարարական գիրս առ մեծամեծս Եգիպտոսի. զի երկու տարի յառաջ Եգիպտոսի Բաշայ էր։ Եւ Թովմաճանն շրջեցաւ ի բոլոր քաղաքն և ի ամուր բերդն Քանտիայու, որ և սա ի Վենետիկցւոց շինեալ էր. որ և զամս ութուտասն պատերազմելով օսմանցին հազիւ թէ առեալ է։ Եւ Թովմաճանն կացեալ ի Քանտիա աւուրս 24, ել ի Նոյ. 24ին, և 29 հասաւ ի յԱլեքսանդրիա ընդ որդւոյն իւրոյ Պօղոսի, և գնացեալ իջեւանեցաւ ի վանս Ֆրանջիսկան բաթերայից, որոյ մեծաւորին անունն էր բատրէ Պոնավենթուրա՝ բրէֆիտէնթի տի գունվանթոյ տի սանդակատարինա, ուրախ սանֆասոն օրհնեալ մարդ էր։ Եւ գործակալ այսր